

Սոցիալական, կրթական և առողջապահական ծրագրեր

Հիմնադրամբ Շուշիում իրականացրել է մի շարք սոցիալական, կրթական և առողջապահական ծրագրեր, որոնց մի մասը շարունակական է, օրինակ՝ սուբսիդավորված դեղամիջոցների տրամադրում, սուբսիդավորված կինոցուցադրություններ և այլն:

Շուշիի բնակչության սոցիալական, կրթական և առողջապահական կարգավիճակը հետևողականորեն բարձրացնելու համար Հիմնադրամբ շարունակում է սոցիալական և կրթական ծրագրերի իրականացումը, մասնավորապես՝ փոքր և միջին բիզնեսի կազմակերպման դրամաշնորհներ, մասնագիտական վերապատրաստում, շուշեցի երեխաների այցելություն Երևան, կրթաթոշակ Երևանում շուշեցի ուսանողներին, դպրոցական պիտույք, օտար լեզուների դասընթացներ, շինանյութի արտադրամասի ստեղծում:

